


«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի վերականգնում և զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծում



Ծրագրի նկարագիրը

Ծրագրի նպատակն է ստեղծել երկրի հարուստ պատմությունը և նրա ժառանգությունը ներկայացնող մշակութային և զբոսաշրջային կենտրոն, որը կդառնա Երևան քաղաքի այցեքարտերից մեկը: Հայաստան ժամանող ավելի քան մեկ միլիոն զբոսաշրջիկների գերակշիռ մասի համար Երևան քաղաքը հանդիսանում է առաջին հյուրընկալը և հիմնական հանգրվանը:

Էրեբունին, ինչպես տարածաշրջանի, այնպես էլ հայկական հնագիտական ժառանգության նշանավոր հուշարձաններից է, որը գտնվում է Երևանի հարավարևելյան հատվածում՝ Արին-բերդ բլուրի գագաթին: Այն Ուրարտու պետության հյուսիսային սահմանի երկայնքով կառուցված ուրարտական հզոր բերդաքաղաքներից է, որը եղել է կարևորագույն տնտեսական, քաղաքական ու մշակութային կենտրոն: Ըստ հայնտնաբերված սեպագիր արձանագրությունների Արգիշտի Առաջինի կողմից Ք.ա. 782 թվականին կառուցվել է Էրեբունի քաղաք-ամրոցը:



«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը բացվել է 1968 թվականին՝ Էրեբունի-Երևանի հիմնադրման 2750-ամյակի առիթով: Թանգարանի պահոցներում առկա է ավելի քան 10936 հնագիտական առարկա: Թանգարանն ունի գիտահետազոտական, ֆոնդերի պահպանման, էքսկուրսիայի, զանգվածային միջոցառումների բաժիններ, վերականգնման և մարդաբանական լաբորատորիաներ: Թանգարան-արգելոցը ներառում է թանգարանի շենքը, ամրոցի հատվածը (միջնաբերդ) և Խալդի Աստծո և Արգիշտի արքայի տաճարների կիսակառույցները:


Նախատեսվում է վերակառուցել և ամրակայել՝

- թանգարանի շենքը և միջնաբերդը,
- Խալդի աստծո տաճարը, Արգիշտի արքայի պալատը, զիկուրատը, կարասային սրահը,
- ամֆիթատրոնը, որտեղ կբեմադրվեն թատերականացված ներկայացումներ Երևան քաղաքի պատմական անցյալի վերաբերյալ,
- հանգստի գոտին, որտեղ կստեղծվի ուրարտական ժամանակաշրջանի խոհանոցի ներկայացման հնարավորություն, ինչպես նաև ուրարտական մշակույթին բնորոշ և պատմական միջավայրը ցուցադրող այլ տարրեր,
- վարչական շենքը, հուշանվերների խանութը, ցանկապատը,

ավտոկայանատեղին:

Ծրագիրն իր մեջ ընդգրկում է հետևյալ բաղադրիչները՝

- **Պատմական վերածնունդ**՝ ամրոցի պատմական նշանակության և ուրարտական թագավորների դարաշրջանի, ինչպես նաև քաղաքի հիմնադրման պատմության վերականգնում, նախատեսվում է 3D տեխնոլոգիաների կիրառմամբ ներկայացումներ՝ ամրոցի և ուրարտական թագավորության պատմության վերաբերյալ: Արգելոց-թանգարանի ողջ տարածքում ուրարտական դարաշրջանին համահունչ տարրերի կիրառում:



- **Մշակութային վերածնունդ**՝ տարվա ընթացքում արգելոցի համապարփակ տարածքներում կարող են կազմակերպվել մի շարք բացօթյա մշակութային միջոցառումներ: Հուշարձանային վայրերում ավանդական խոհանոցների կազմակերպումը բխում է նյութական և ոչ նյութական ժառանգությունների անքակտելի կապից: Առաջարկվող ուրարտական խոհանոցը կազմակերպվելու է ամրոցի տարածքից դուրս՝ բլրի ստորոտին և կրկնելու է ուրարտական արքայական ճաշասենյակը՝ համապատասխան ձևավորմամբ (ուրարտական որմնանկարներով, արժեքավոր գտածոների կրկնօրինակով և այլն), որտեղ այցելուն կարող է վերականգնված տեսնել ուրարտական սեղանը և աթոռները, խոհանոցային սպասքը և համտեսել ուրարտական հնավայրերից հայտնաբերված սննդամթերքների հիմքի վրա վերականգնված բաղադրատոմսերով ուտեստները:



- **Կրոնական վերածնունդ**՝ ժամանակի պաշտամունքային միջավայրի և ուրարտական աստվածների դիցարանի վերաբերյալ ճանաչողական միջոցառումների, բեմադրությունների կազմակերպում՝ հաշվի առնելով, որ տարածքում գտնվում է ուրարտական դիցաբանության գերագույն՝ Խալդի աստծո տաճարը:

- **Հնագիտական նշանակություն**՝ «Էրեբունի» արգելոց-թանգարանն իր

հնագիտական արժեքով մեր տարածաշրջանում կարող է դառնալ ուրարտագիտության ուսումնասիրման կարևոր կենտրոններից մեկը օտարերկրյա հնագետների և գիտնականների համար: Այստեղ արդեն գործում է «Պատանի հնագետ» դպրոցը:

- **Ենթակառուցվածքային զարգացում**՝ թանգարանի տարածքը հնարավորություն է տալիս օգտագործել շրջապատող գոտիները յուրահատուկ բուսականության աճեցման, հանրային ծառայությունների զարգացման, սահմանափակ կարողություններով անձանց ինտեգրման պայմանների ստեղծման և այլ հնարավորությունների համար:

Արգելոց-թանգարանի վերակազմություն ծրագրում կարևորվում է արդի **տեղեկատվական տեխնոլոգիաների** կիրառումը, ինչպես օրինակ ցուցանակների վրա QR կոդերի կիրառումը, ատլիո-գիդերի տրամադրումը, ինտերակտիվ կրպակների տեղադրումը, հեռախոսային ծրագրերի ապահովումը և այլն:

Տեխնիկական ցուցանիշներ

Ընդհանուր մակերեսը կազմում է 27.9 հա տարածք:

Ծրագրի ժամկետներ

Ծրագրի իրականացման ժամկետը 3 տարի է:

Ծրագրի արժեքը

Ծրագրի արժեքը կազմում է շուրջ 10 մլն. ԱՄՆ դոլլար: Հնարավոր է ծրագիրն իրականացնել նաև փուլային տարբերակով:

Ներդրումների ձևեր և հիմնական պայմանները

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնք-մասնավոր համագործակցության շրջանակում:

Ներկա իրավիճակ

Առկա է կառուցապատման էսքիզային նախագիծ: